ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/230

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13362-2021 գրությամբ Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 17.08.2021թ. թիվ 1377 գրության հիման վրա, 23.08.2021թ. թիվ 26/26-1/13362-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/230 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2021թ. թիվ 1377 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի հուլիսի 22-ին Չարենցավանի համայնքապետարանը էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի՝ www.armeps.am, միջոցով տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՉՀ-ԳՀԱՊՁԲ-2021/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանը:

Գնահատող հանձնաժողովը 2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 2 որոշմամբ կասեցրել է նիստը և ի թիվս այլ մասնակիցների վերջինիս էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում առկա անհամապատասխանությունները: Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշել է Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ձեզ ենք տրամադրում «ՁՀ-ԳՀԱՊՁԲ-2021/7» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը՝ Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանի տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/230 ընթացակարգի շրջանակներում 27.08.2021թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/230 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/230 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՁՀ-ԳՀԱՊՁԲ-2021/7» ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.3-րդ ենթակետով արձանագրվել է, որ Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1), որտեղ բացակայում է «Գործարանային մակնանշված պատվիրատուի կողմից հաստատված անվանմամբ» նախադասությունը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և այդ մասին ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13362-2021 գրությունը, ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 17.08.2021թ. թիվ 1377 գրությունը և կից փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը <u>մեկ աշխատանքային օրով</u> կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:...***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շփկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը <u>մեկ աշխատանքային օրով</u> կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ ***եթե սույն հրավերի <u>8.9-րդ կետով սահմանված ժամկետում</u> մասնակիցը շփկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Եվ այսպես, ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան համայնքի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԳՀԱՊՁԲ-2021/7» ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.3-րդ ենթակետով արձանագրվել է, որ Ա/Ձ Ռոբերտ

Գայիկյանի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1), որտեղ բացակայում է «Գործարանային մակնանշված պատվիրատուի կողմից հաստատված անվանմամբ» նախադասությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և այդ մասին ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, եթե սույն կարգի 41-րդ կետով և սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ վերոհիշյալ կետերը սահմանում են, որ մասնակցի հայտում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում, մասնակցին տրվում է ***մեկ աշխատանքային օր ժամկետ***, որի ընթացքում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում՝ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ տարիներով, ամիսներով կամ ***<u>օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է</u>*** այն օրացուցային տարվա, ամսվա, ***ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը <u>հաջորդ օրվանից</u>***, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում է՝

1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

2. Եթե այդ գործողությունը պետք է կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

3. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Վերը նշված կետերով սահմանվում են ժամկետների հաշվարկման իրավակարգավորումները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գործում եղած փաստերի համաձայն՝ Մասնակցին անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ***<u>09.08.2021թ. ժամը 10:57-ին</u>***, իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***<u>10.08.2021թ. ժամը 15:00-ին</u>*** տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է վերջինիս հայտը, այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերով և 32-րդ հոդվածի վերոնշված մասերով սահմանված պահանջները, քանի որ վերջինս չի պահպանել նշված իրավակարգավորումներով սահմանված ժամկետը, այն է՝ մեկ աշխատանքային օրը, որպիսի պայմաններում Ա/Ձ Ռոբերտ Գայիկչյանին զրկել է

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունները սահմանված կարգով և ժամկետում կատարելու հնարավորությունից:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ա/Ձ Ռոբերտ Գայիկյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.08.2021թ. թիվ 26/26-1/13362-2021 գրությամբ Ա/Ձ Ռոբերտ Գայիկյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**